Social Security

# Հաշմանդամության ընթացքում աշխատելը՝ ինչպես մենք կարող ենք օգնել Հունվար

2012թ.

www.socialsecurity.gov

# Կապվեք Սոցիալական Ապահովության վարչության հետ

## Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրիւ տեղեկությունները: Այս կայքէջում նաեւ կարող եք՝

- դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստներ ստանալու համար,
- Գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցէն.
- ծանոթանալ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության անձնական հաշվետվությանը*),
- պահանջել Medicare-ի նոր քարտ և
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները.

Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերեն լեզվով:

## Զանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով

Բացի մեր կայքից օգտվելուց կարող եք նաև զանգահարել մեզ անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Այուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Որպես կանոն, զանգահարողներն ավելի կարճ են սպասում, եթե զանգահարում են շաբաթվա մեջ երեքշաբթիին հաջորդող օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ: Եթե Դուք խուլ եք կամ թույլ լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

# Բովանդակություն

Կապվեք Սոցիալական Ապահովության վարչության հետ . . . . . 2

Ստանում եք հաշմանդամության նպաստներ: Մենք կարող ենք օգնել ձեզ աշխատանքի ընդունվելու հարցում . . . . . 4

Սոցիալական Ապահովության աշխատանքի խթանները մի հայացքից . . . . . 6

Ինչպես են ձեր եկամուտները ազդում Սոցիալական Ապահովության նպաստների վրա . . . 9

Եթե դուք կորցնում եք ձեր աշխատանքը . . . . . 11

Հատուկ կանոններ այն աշխատողների համար, ովքեր կույր են . . . . . 11

Ամփոփ՝ SSI-ի աշխատանքի խթանների մասին . . . . . 12

Ինչպես է ձեր հասույթը ազդում «SSI»-ի վճարների վրա . . . . . 14

Ինչպիսի տվյալներ է անհրաժեշտ հաղորդել, եթե աշխատում եք և SSI ստանում: . . . . . 15

Որքա՞ն երկար է շ արունակվելու ձեր «Medicaid»-ը . . . . 17

## Ստանում եք հաշմանդամության նպաստներ: Մենք կարող ենք օգնել ձեզ աշխատանքի ընդունվելու հարցում

*Եթե դուք ստանում եք հաշմանդամության նպաստներ, ապա մենք ունենք լավ նորություններ ձեզ համար: Սոցիալական Ապահովության աշխատանքի խթանների եւ «Աշխատանքի կարգագիր» ծրագրերը կարող են ձեզ օգնել, եթե դուք հետաքրքրված եք աշխատելու հարցում:*

Սահմանված են հատուկ կանոններ, որոնք հնարավորություն են ընձեռում սոցիալական ապահովության անաշխատունակության նպաստ կամ Լրացուցիչ ապահովության եկամուտ (SSI) ստացող անձանց աշխատել՝ չզրկվելով իրենց ամսական վճարումներից:

Իսկ, եթե դուք չեք կարող շարունակել աշխատելը ձեր առողջական վիճակի պատճառով, ապա ձեր նպաստները կարող են կրկին սկսվել՝ հնարավոր է, որ պետք չլինի ներկայացնելու նոր դիմում-հայտարարագիր:

Աշխատանքի խթանները ներ են առնում.

- Կանխիկ դրամով շարունակական նպաստներ ձեր աշխատելու ժամանակամիջոցում.
- Շարունակական «Medicare» կամ «Medicaid» ձեր աշխատելու ժամանակամիջոցում.
- Օգնություն կապված կրթության, վերապատրաստման եւ

վերականգնման հետ՝ աշխատանքի նոր ուղղություն սկսելու նպատակով:

Սոցիալական Ապահովության եւ «SSI»-ի կանոնները տարբեր են: Սույն գրքույկի տարբեր բաժիններում մեր կողմից բացատրվում են յուրաքանչյուր ծրագրով գործող կանոնները: Սոցիալական ապահովությանն ու SSI-ին վերաբերող կանոնները տարբեր են: Տարբեր ծրագրերին վերաբերող կանոնները նշված են այս գրքույկի տարբեր բաժիններում: Սոցիալական ապահովության խթաններն սկսվում են 6-րդ էջից: SSI-ի խթաններն սկսվում են 12-րդ էջից:

Այնուամենայնիվ, անկախ նրանից՝ Դուք ստանում եք սոցիալական ապահովության, թե SSI-ի նպաստ, կարևոր է արագ տեղեկացնել մեզ, երբ աշխատանքի եք տեղավորվում կամ թողնում եք աշխատանքը, կամ երբ Ձեր աշխատանքի պայմաններում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք կարող են ազդել Ձեր նպաստների վրա:

Եթե ցանկանում եք աշխատել, ապա Ձեզ կարող է օգնել նաև «Աշխատանքի կարգագիր» ծրագիրը: Դուք կարող եք ստանալ աշխատունակության վերականգնման, վերապատրաստման, աշխատանքի հանձնարարագրերի և աշխատանքի տեղավորման հետ կապված այլ անվճար ծառայություններ: Կարգագիրն օգտագործելու ընթացքում աշխատանքին վերադառնալու նպատակի ուղղությամբ առաջընթաց ցույց տալու դեպքում Դուք բժշկական քննության չեք ենթարկվի:

«Աշխատանքի կարգագիր» ծրագրի մասին լրացուցիչ տեղեկատվությունը դուք կարող եք ստանալ անվճար

զանգահարելով՝ 1-866-968-7842 (TTY 1-866-833-2967): Կամ էլ դուք կարող եք զանգահարել մեր անվճար հեռախոսահամարով եւ խնդրել *Your Ticket To Work* հրապարակումը (*Ձեր աշխատանքի կարգագիրը* — Հրապարակում թիվ 05-10061, միայն անգլերեն է մատչելի):

Լրացուցիչ տեղեկատվության համար դուք նաեւ կարող եք այցելել «Աշխատանքի կարգագիր»-ի կայքէջը՝ ***www.choosework.net***:

## Սոցիալական Ապահովության աշխատանքի խթանները մի հայացքից

(SSI ծրագրի կանոններն սկսվում են 12-րդ էջից:)

**Աշխատանքային փորձաշրջան՝** Աշխատանքային փորձաշրջանը թույլ է տալիս ստուգել աշխատելու ձեր ունակությունը: Ձեր փորձաշրջանի ընթացքում դուք ստուգում եք աշխատելու ձեր ունակությունը առնվազն ինը ամսվա ընթացքում: Ձեր փորձաշրջանի ժամանակ դուք ստանալու եք Սոցիալական Ապահովության ձեր նպաստները՝ ձեր աշխատանքային գործունեության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու եւ հաշմանդամության պատճառ դարձած վնասվածքը պահպանվելու դեպքում: 2012 թվականի համար աշխատանքային փորձաշրջան է համարվում ցանկացած այն ամիսը, որի ընթացքում Ձեր վաստակած ընդհանուր գումարը գերազանցել է 720 դոլարը կամ եթե ինքնազբաղվածության արդյունքում վաստակել եք 720 դոլար

(ծախսերը հանած) կամ Ձեր սեփական գործի վրա ծախսել ավելի քան 80 ժամ: Աշխատանքային փորձաշրջանը շարունակվում է մինչեւ 60-ամսյա ժամանակամիջոցում ձեր ինը ամիս աշխատելը:

**Իրավասու լինելու երկարաձգված ժամանակաշրջան՝** Ձեր աշխատանքային փորձաշրջանից հետո դուք ունեք 36 ամիս, որի ընթացքում կարող եք աշխատել եւ շարունակել ստանալ նպաստներ այն ամսվա համար, որի ընթացքում ձեր հասույթը «շոշափելի» չի եղել: 2012 թվականի համար մենք շոշափելի ենք համարում 1010 դոլարը (կույրերի դեպքում՝ 1690 դոլարը) գերազանցող հասույթը: Այդ ժամանակամիջոցում Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստ ստանալու համար նոր դիմում-հայտարարագրի կամ հաշմանդամության մասին որոշման անհրաժեշտություն չկա:

**Շտապ վերականգնում՝** Երբ ձեր նպաստները դադարում են կապված ձեր հասույթի շոշափելի դառնալու հետ, դուք ունեք հինգ տարի, որի ընթացքում դուք կարող եք դիմել մեզ անմիջապես սկսելու ձեր նպաստները՝ եթե դուք գտնում եք, որ դուք ի վիճակի չեք շարունակել աշխատելը ձեր վիճակի պատճառով: Ձեր հաշմանդամությունը հաստատելու նպատակով ձեր առողջական վիճակի վերաքննության ընթացքում, դուք չպետք է ներկայացնեք հաշմանդամության նոր դիմում-հայտարարագիր եւ սպասեք ձեր նպաստների սկսվելուն:

**«Medicare»-ի շարունակումը՝** Եթե ձեր Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստները դադարում են ձեր հասույթի պատճառով, սակայն դուք շարունակում եք լինել հաշմանդամ, ապա աշխատանքային փորձաշրջանի իննամսյա ժամանակամիջոցից հետո ձեր «Medicare»-ի Մաս A-ի ծածկույթը կպահպանվի առնվազն 93 ամսվա ընթացքում: Դրանից հետո դուք կարող եք գնել «Medicare»-ի Մաս A-ի ծածկույթ, վճարելով ամսական ապահովագրավճար: Եթե դուք ունեք «Medicare»-ի Մաս B-ի ծածկույթ, ապա դուք պետք է շարունակեք վճարել ապահովագրավճարը: Եթե դուք ուզում եք ավարտել ձեր Մաս B-ի ծածկույթը, ապա դուք պետք է խնդրեք դա գրավոր:

**Ձեր հաշմանդամության հետ կապված աշխատանքային ծախսերը՝** Աշխատելու դեպքում կարող է պահանջվել, որպեսզի դուք վճարեք որոշակի իրերի եւ ծառայությունների համար, որոնց համար չեն վճարում առանց հաշմանդամության մարդիկ: Օրինակ՝ առողջական վիճակի պատճառով Դուք կարող եք հասարակական տրանսպորտի փոխարեն տաքսու անհրաժեշտություն ունենալ կամ վճարել հոգեբանական ծառայությունների համար: Մենք կարող ենք հնարավորություն ունենալ՝ հանելու այդ ծախսերը Ձեր ամսական եկամուտից, նախքան կորոշենք նպաստ ստանալու Ձեր իրավասությունը:

## Ինչպե՞ս են ձեր եկամուտները ազդում Սոցիալական Ապահովության նպաստների վրա

Աշխատանքային փորձաշրջանի ժամանակ ձեր հասույթի նկատմամբ սահմանափակումներ չկան: Իրավասության 36-ամսյա երկարաձգված ժամանակամիջոցի ընթացքում դուք սովորաբար չեք կարող վաստակել ամսական 1.010 դոլարից ավելի, այլապես ձեր նպաստները կդադարեն: Այնուամենայնիվ, Ձեր հասույթի հաշվարկման ժամանակ հաշմանդամության հետևանքով առաջացած աշխատանքային ծախսերը հանվում են: Եթե դուք կրում եք լրացուցիչ աշխատանքային ծախսեր, ապա ձեր հասույթը կարող է լինել 1.010 դոլարից շոշափելիորեն բարձր նախքան ձեր նպաստների վրա դրանց ազդելը: Այդ շոշափելի հասույթի գումարը սովորաբար ամեն տարի աճում է:

Մենք հանում ենք ձեր հաշմանդամության հետ կապված աշխատանքային ծախսերը ձեր հասույթից նախքան մեր կողմից ձեր իրավասության պահպանման վերաբերյալ որոշումը: Այդ ծախսերը կարող են ներառել որեւէ իրի կամ ծառայության հետ կապված ծախսերը, որոնք ձեզ անհրաժեշտ են աշխատելու համար, նույնիսկ եթե իրը կամ ծառայությունը օգտակար է ձեզ համար ձեր առօրյա կյանքում: Օրինակ՝ դեղատոմսային դեղերի համավճարներ, խորհրդատվական ծառայություններ, փոխադրում աշխատանքի վայր և ետ (որոշ պայմանների դեպքում),

անձնական խնամող կամ աշխատանքի վերապատրաստող, հաշմանդամի սայլակ կամ աշխատանքի մեջ օգտագործվող որևէ այլ մասնագիտական սարք:

## Ինչպիսի տվյալներ է անհրաժեշտ հաղորդել, եթե աշխատում եք և սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստ ստանում:

Եթե Դուք սոցիալական ապահովության նպաստ եք ստանում՝ հաշմանդամության պատճառով, անհրաժեշտ է մեզ տեղյակ պահել, երբ.

- տեղավորվում եք աշխատանքի կամ թողնում աշխատանքը,
- փոխվում են Ձեր պարտականությունները, աշխատանքային ժամերը կամ աշխատավարձը կամ
- աշխատանքի մեջ ծախսեր են առաջանում՝ կապված Ձեր հաշմանդամության հետ:

Աշխատանքային պայմանների այս փոփոխությունների մասին կարող եք մեզ հաղորդել հեռախոսով, փոստով կամ անձամբ այցելելով: Ձեր տեղական գրասենյակի հասցեն փնտրեք մեր կայքում՝ ***www.socialsecurity.gov***: Ձեր հաշվետվությունը հաստատելու համար մենք ստացական կտանք: Այդ ստացականն անհրաժեշտ է պահել՝ Սոցիալական ապահովության վարչությունից ստացված մյուս կարևոր փաստաթղթերի հետ միասին:

## Եթե դուք կորցնում եք ձեր աշխատանքը

Եթե դուք կորցնում եք ձեր աշխատանքը աշխատանքային փորձաշրջանի ժամանակ, ապա ձեր նպաստները չեն ներազդվում: Եթե դուք կորցնում եք ձեր աշխատանքը իրավասության 36-ամսյա ժամանակամիջոցի ժամանակ, ապա զանգահարեք մեզ եւ ձեր նպաստները կվերականգնվեն մինչեւ ձեր հաշմանդամության պահպանվելը:

## Հատուկ կանոններ այն աշխատողների համար, ովքեր կույր են

Եթե դուք կույր եք եւ Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու հետ մեկտեղ դուք աշխատում եք, ապա գոյություն ունեն հատուկ կանոններ.

- 2012թ.-ին դուք ամսական կարող եք վաստակել 1.690 դոլար՝ մինչեւ ձեր հասույթը կազդի ձեր նպաստների վրա:
- Եթե դուք ունեք շատ բարձր եկամուտ հաշմանդամության նպաստ ստանալու համար, ապա դուք այնուամենայնիվ իրավասու եք հաշմանդամության «սառեցման» համար: Դա նշանակում է, որ ձեր ապագա նպաստները հաշվարկելու ընթացքում մենք հաշվի չենք առնի այն կարիքները, երբ դուք ձեր հաշմանդամության պատճառով ունեիք փոքր կամ չունեիք հասույթ:

Դա կարող է օգնել ձեզ, որովհետեւ նպաստները հիմնված են ձեր աշխատանքային ստաժի ընթացքում

ձեր ամենաբարձր հասույթի վրա: Կույրերի համար սահմանված հատուկ կանոնների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար խնդրեք *If You Are Blind Or Have Low Vision—How We Can Help* հրապարակումը (*Եթե դուք կույր եք կամ ունեք թույլ տեսողություն ինչպես մենք կարող ենք օգնել*, Հրապարակում թիվ 05-10052, միայն անգլերեն է մատչելի):

## Ամփոփ՝ SSI-ի աշխատանքի խթանների մասին

(Սոցիալական ապահովության հաշմանդամությանն առնչվող կանոններն սկսվում են 6-րդ էջից:)

Չընդհատվող SSI. SSI-ը վճարվում է առնվազն 65 տարեկան, կույր կամ հաշմանդամ անձանց, ովքեր ունեն ցածր եկամուտ և սահմանափակ միջոցներ: Եթե Դուք հաշմանդամ եք և աշխատում եք՝ չնայած Ձեր հաշմանդամությանը, Դուք կարող եք շարունակել վճարումներ ստանալ, քանի դեռ Ձեր հասույթը՝ այլ եկամուտի հետ միասին, չի գերազանցում SSI-ի սահմանած ցածր եկամուտի սահմանը: Նույնիսկ եթե ձեր «SSI»-ի վճարները դադարեն, սովորաբար «Medicaid»-ում ձեր ընդգրկվածությունը կշարունակվի, եթե ձեր հասույթը ձեր նահանգի սահմանից ցածր է:

Շտապ վերակագնում՝ Եթե ձեր հասույթի պատճառով մենք դադարեցրել ենք ձեր վճարումները եւ դուք ձեր առողջական վիճակի պատճառով դարձել եք աշխատելու համար անկարող, ապա դուք կարող եք դիմել մեզ ձեր վճարումները կրկին սկսելու խնդրանքով: Ձեզ անհրաժեշտ չի

լինի ներկայացնել հաշմանդամության նոր դիմում-հայտարարագիր, եթե դուք այդ խնդրանքը ներկայացնեք ձեր նպաստները դադարելուց հետո հինգ տարվա ընթացքում:

Հաշմանդամության հետ կապված աշխատանքային ծախսեր. Եթե Դուք աշխատում եք, ապա կարող եք ստիպված լինել վճարելու այնպիսի ծառայությունների և ապրանքների համար, որոնց համար չեն վճարում հաշմանդամություն չունեցող անձինք: Օրինակ՝ առողջական վիճակի պատճառով Դուք կարող եք հասարակական տրանսպորտի փոխարեն տաքսու անհրաժեշտություն ունենալ կամ վճարել հոգեբանական ծառայությունների համար: Մենք կարող ենք հնարավորություն ունենալ՝ հանելու այդ ծախսերը Ձեր ամսական հասույթից, նախքան կորոշենք նպաստ ստանալու Ձեր իրավասությունը:

Ինքնաֆինանսավորման հասնելու ծրագիր. Եթե մենք հավանություն տանք աշխատանքի տեղավորվելու Ձեր նպատակին, որին հասնելու արդյունքում կնվազի Ձեր կախվածությունը SSI-ից կամ Դուք կհրաժարվեք SSI-ի վճարումներից, ապա այդ նպատակի համար օգտագործված որևէ գումար հաշվի չի առնվի, երբ մենք պարզենք, թե ինչպես են Ձեր ներկայիս եկամուտն ու միջոցներն ազդում Ձեզ վճարվող գումարի վրա: Լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք *Working While Disabled – A Guide To Plans For Achieving Self-Support* (*«Աշխատանքի հնարավորություններ՝ անաշխատունակների համար.*

*Ինքնաֆինանսավորման հասնելու ծրագրերի ուղեցույց»*, Publication No. 05-11017):

Հաշմանդամություններ ունեցող ուսանողները՝ Մեր կողմից հաշվի չի առնվում 2012թ.-ին ձեր ամսական հասույթի մինչեւ 1.700 դոլարը (2012թ.-ի համար առավելագույնը 6.840 դոլար), երբ մենք հաշվում ենք ձեր «SSI»-ի վճարը, եթե ձեր 22 տարեկանը չի լրացել եւ դուք ստացիոնար հաճախում եք դպրոց կամ ընդգրկված եք ուսուցման ծրագրում:

## Ինչպես է ձեր հասույթը ազդում «SSI»-ի վճարների վրա

Ձեր «SSI»-ի վճարնրի գումարը կախված է ձեր ստացվող եկամուտից: Երբ մեծանում է ձեր այլ եկամուտը, սովորաբար ձեր «SSI»-ի վճարները նվազում են: Սակայն, ձեր վճարները ինքնաբերաբար կվերսկսվեն ցանկացած այն ամսվա համար, երբ ձեր եկամուտը ընկնի «SSI»-ի սահմանից ցածր: Պարզապես տեղեկացրեք մեզ, եթե ձեր վճարները կրճատվեն կամ եթե դուք դադարեք աշխատել:

Եթե բացի «SSI»-ից ձեր միակ եկամուտը հանդիսանում է ձեր աշխատանքից ստացվող գումարը, ապա մենք չենք հաշվի առնում ձեր ամսական հասույթի առաջին 85 դոլարը: Մենք ձեր «SSI»-ի հասույթից հանում ենք 50 սենթ՝ 85 դոլար հանումից հետո ստացված յուրաքանչյուր դոլարից:

**Օրինակ.** Դուք աշխատում եք և վաստակում ամսական 1000 դոլար: Ձեր աշխատավարձից և SSI-ից բացի այլ եկամուտ չունեք:

$1.000
-$85
$915 բաժանած 2-ի = $457,50

Մեր կողմից ձեր «SSI»-ի վճարից կհանվի 457,50 դոլար:

Դուք կարող է իրավասու լինեք «ինքնաֆինանսավորման հասնելու պլան»-ի համար, որը ձեզ թույլ է տալիս գումարները եւ միջոցները օգտագործելու որոշակի աշխատանքային նպատակով: Այդ միջոցները հաշվի չեն առնվում, երբ մենք գնահատում ենք, թե որքանով է ձեր առկա եկամուտը ազդում ձեր նպաստների գումարի վրա:

## Ինչպիսի՞ տվյալներ է անհրաժեշտ հաղորդել, եթե աշխատում եք և SSI ստանում:

Եթե Դուք ստանում եք SSI, պետք է մեզ տեղյակ պահեք, երբ.

- տեղավորվում եք աշխատանքի կամ թողնում աշխատանքը,
- փոխվում են Ձեր պարտականությունները, աշխատանքային ժամերը կամ աշխատավարձը կամ
- աշխատանքի մեջ ծախսեր են առաջանում՝ կապված Ձեր հաշմանդամության հետ:

Ձեր ամսական եկամուտը պետք է հայտնեք՝

- զանգահարելով մեր անվճար հեռախոսահամարով՝ **1-800-772-1213**, հաջորդ ամսվա 6-րդ օրից ոչ ուշ, կամ
- փոստով ուղարկելով կամ Ձեր տեղական գրասենյակ

անձամբ բերելով Ձեր վճարային անդորրագրերը՝ հաջորդ ամսվա 10րդ օրից ոչ ուշ:

Ձեր տեղական գրասենյակի հասցեն փնտրեք մեր կայքում՝ ***www.socialsecurity.gov***: Ձեր հաշվետվությունը հաստատելու համար մենք ստացական կտանք: Այդ ստացականն անհրաժեշտ է պահել՝ Սոցիալական ապահովության վարչությունից ստացված մյուս կարևոր փաստաթղթերի հետ միասին:

Հեռախոսակապ ունեցող շատ անձինք կարող են իրենց աշխատավարձը հաղորդել աշխատավարձի հաշվետվության ինքնաշխատ համակարգի միջոցով: Հեռախոսով աշխատավարձը զեկուցելով՝ Դուք խնայում եք թուղթը, փոստային ծախսերն ու Ձեր ժամանակը, քանի որ վերանում է աշխատավարձի մասին վկայող թղթերը պատճենահանելու և ֆաքսով կամ փոստով տեղական գրասենյակ ուղարկելու անհրաժեշտությունը: Գրանցվելու համար դիմեք Սոցիալական ապահովության վարչություն: Աշխատավարձը զեկուցելու մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար պահանջեք *Reporting Your Wages When You Receive Supplemental Security Income (SSI)* (*«Ինչպես զեկուցել աշխատավարձը՝ Լրացուցիչ ապահովության եկամուտ (SSI) ստանալիս»*, Publication No. 05-10503: Հրապարակումն առկա է միայն անգլերեն:)

## Որքա՞ն երկար է շարունակվելու ձեր «Medicaid»-ը

Ընդհանուր առմամբ, ձեր «Medicaid»-ի ծածկույթը կշարունակվի, նույնիսկ ձեր «SSI»-ի վճարները դադարելուց հետո՝ նախքան ձեր եկամուտի որոշակի մակարդակին հասնելը: Այդ մակարդակը տարբեր է յուրաքանչյուր նահանգում եւ արտացոլում է ձեր նահանգում եղած առողջապահության հետ կապված ծախսերը: (Մենք կարող ենք ձեզ ասել ձեր նահանգում «Medicaid»-ի մակարդակը): Այնուամենայնիվ, եթե ձեր առողջապահության հետ կապված ծախսերը այս մակարդակից բարձր են, դուք կարող եք ունենալ ավելի շատ եկամուտ եւ պահպանել ձեր «Medicaid»-ը: Նահանգներից մեծ մասում, որպեսզի «Medicaid»-ը շարունակվի դուք պետք է.

- Ունենաք դրա կարիքը՝ աշխատելու նպատակով.
- Հնարավորություն չունենաք հոգալու այդ ծախսերը առանց «SSI»-ի.
- Շարունակեք ունենալ հաշմանդամական վիճակ.
- Բավարարեք «SSI»-ի համար իրավասության բոլոր մյուս պահանջներին:

Եթե դուք բավարարում եք «Medicaid»-ի համար այս կանոններով, ապա մեր կողմից ձեր գործը ժամանակ առ ժամանակ կվենայվի, որպեսզի տեսնենք, որ դուք շարունակում եք մնալ հաշմանդամ կամ կույր եւ դեռեւս վաստակում եք ձեր նահանգի թույլատրելի մակարդակից ցածր:

www.socialsecurity.gov

**Social Security Administration**
SSA Publication No. 05-10095-AM
Working While Disabled—How We Can Help (Armenian)
August 2012